## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«27» հունիսի 2025թ. N 70-Ա

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 15-րդ կետը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2025 թվականի մայիսի 23-ի հայտով ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված «LIRA-FEM (ЛИРА-САПР) ծրագրային փաթեթի կիրառությունը երկաթբետոնե շենքերի նախագծման բնագավառում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 24 կրեդիտ:
2. Հաստատել «LIRA-FEM (ЛИРА-САПР) ծրագրային փաթեթի կիրառությունը երկաթբետոնե շենքերի նախագծման բնագավառում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի դեկտեմբերի 27 -ի N 70 -Ա հրամանի

**«LIRA-FEM (ЛИРА-САПР) ծրագրային փաթեթի կիրառությունը երկաթբետոնե շենքերի նախագծման բնագավառում»**

**միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Հունիսի 2-30-ը, Հոկտեմբերի 1-29-ը | 19"30-21"30 | «LIRA-FEM (ЛИРА-САПР) ծրագրային փաթեթի կիրառությունը երկաթբետոնե շենքերի նախագծման բնագավառում» | ՃՇՀԱՀ Շինարարական կոնստրուկցիաների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Հովհաննես Արմենի Ավագյանը | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 | 24 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 04, 05, 34 մասնագիտություններ | 250"000 ՀՀ դրամ |